

11100

140

891.99

4 - 18

ԿԱՄՈՒՐՁ



ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

مصارف آمریقان میونتر شرکتی طرفندن تسویه اولنده رق
معارف عمومیه نظارت جلیله سنک رخصتیه
۲۷ ربیع الاول ۳۰۰ و ۲۴ کانون ثانی ۹۸ نومرو ۹۰۴

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՅՑԱՃԵԱՆ

1883

891.99

4-18

2007

2682

Հ.Դ.ՈՒՍԱՍԻ

2624
39

891.99

4-18

ԿԱՄՈՒՐԶ

ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Ճանապարհորդ մի իւր ճամբորդութեան մէջ շատ այգիներու և պարտէզներու մէջ տեղ գեղեցկաշէն քաղաք մը եկաւ։ Տեղեւիտ ծառեր անոր լայն և ընդարձակ փողոցները կը հովանաւորէին։ Հարուստներուն տունները մեծ էին և հեշտ, աղքատներունն ալ փոքր՝ բայց մաքուր և անդորր։ Հարիւրաւոր խանութներ լեցուն էին մեծագին վաճառք, և գործարանաց մէջ արհեստաւորք միշտ զբաղեալ էին գործով։ Վերջապէս ժողովուրդը երջանիկ և բարենշան կ'երևէր։ Ճանապարհորդը մեծ հաճութիւն կը զգար բոլոր տեսածներէն, և քաղաքացիներէն մէկուն հետ խօսակցութեան մտնելով ըսաւ անոր, «Ձեր քաղաքը շատ գեղեցիկ է, և ժողովուրդը երջանիկ և բարենշան կը գըտնեմ։» «Ուր», պատասխանեց միւսը. «մեր քաղաքը գեղեցիկ է, և շատ երջանիկ պիտի

ըլլայինք, եթէ գետը չըլլար:” “Ի՞նչ գետ,” հարցուց օտարականը. “եւ հոս գետ չտեսայ:” “Կայ գետ մը,” ըսաւ միւսը, “խոր և սրընթաց գետ մը, որ քաղաքին մօտ դաշտին մէջէն կը վազէ հաւելի երեւոյթով. ուստի և անոր եզերքը կարգաւ խիտ առ խիտ ծառեր տնկած ենք գետը ծածկելու համար, քանզի չենք ուզեր անոր նայիլ, ոչ ալ անոր վրայ մտածել:” “Ի՞նչ փնաս կ’ընէ ձեզի գետը,” հարցուց ճանապարհորդը զարմանօք և հետաքրքրութեամբ: Քաղաքացին անոր այս հարցմանը սա պատասխանը տուաւ: “Մեր երկրին թագաւորը յիշեալ գետին միւս կողմը կը բնակի, և կը պահանջէ որ մենէ ամէն մէկը, կանուխ կամ անագան, այն խոր և սրընթաց գետէն անցնելով երթայ անոր քով: Մենք առաջուց չենք գիտեր թէ երբ կը կոչէ զմեզ, բայց թագաւորին պատգամաբերը երբ որ գայ, կը ստիպուինք երթալ: Երբեմն գիշերը կը կոչէ զմեզ, և պէտք է որ երթանք. երբեմն ալ այնպիսի ատեն մը կը կոչէ որ շատ զբաղեալ ենք գործերով, սակայն կը ստիպուինք անմիջապէս մեր գործերը թողուլ ու գետէն անցնելով երթալ:” “Ի՞նչպէս կ’անցնուի գետէն,” հարցուց օտարականը. “նաւակաւ թէ ուրիշ կերպով:” “Ոմանք կ’ըսեն

թէ անցնելու համար նաւակ կայ, ոմանք ալ կ’ըսեն թէ չկայ. առոր վրայով ձեզի ստոյգ բան մը չեմ կրնար ըսել. սա միայն իբրեւ ստոյգ կ’ըսեմ թէ այն գետը մեզ կը դողացունէ. անոր վրայ խորհիլն անգամ մեզի մեծ անձկութիւն է. ուստի միշտ կը ջանանք, որ չափ հնար է, անոր գաղափարը մեր մտքէն հանել: Անոր վրայ շատ քիչ կը խօսինք: Մենէ ամէն մէկը գիտէ թէ գետէն պիտի անցնի, երբ որ կը կանչուի. ուստի չենք ուզեր ժամանակէն առաջ մեր խաղաղութիւնը վրդովել անոր յիշատակութեամբ,” պատասխանեց քաղաքացին: “Թագաւորին գտնուած երկրին ի՞նչպիսի տեղ է” ըսաւ օտարականը: “Ամէն մարդ կ’ըսէ թէ շատ գեղեցիկ երկիր է. բայց այս մասին ալ քիչ բան գիտենք. անկէ հոս վերստին եկող մը չկայ որ մեզի այն տեղւոյն վրայով լուր տայ: Թագաւորին մեզի զրկած խօսքէն գիտենք թէ շատ սքանչելի տեղ է, և թէ հոն մեզ ամենուս համար պատրաստուած բնակարաններ կան, բայց և այնպէս շատ քիչերը կը փափաքին հոն երթալ. ընդհակառակն գրեթէ ամէն մարդ աւելի կ’ընտրէ հոս մնալ: Ամէնքս ալ այն գետէն կը վախնանք:” “Ինչո՞ւ համար նաւակներ չէք շիներ կամ ուրիշ պատրաստու-

Թիւններ ըներ անցքը դիւրացնելու և զձեզ վտանգէն ապահով ընելու համար,” կրկնեց օտարականը : Այս հարցման վրայ քաղաքացին տհաճութեամբ պատասխան տուաւ ըսելով . “Կ’աղաչեմ, տէր, այս նիւթին վրայ այլ ևս չխօսինք . ժամավաճառ ըլլալ չեմ ուզեր, քանզի դործ ունիմ, մանաւանդ որ ձեզի ըսի արդէն թէ այս մասին շատ տգէտ եմք, և թէ այս նիւթին վրայ խօսելէ չենք ախորժիր . քաղաքավարութեան ալ դէմ համարուած է ասիկա խօսակցութեան նիւթ ընել : Եթէ այս նկատմամբ աւելի տեղեկութիւն ունենալ կ’ուզէք, գացէք սա մարդուն՝ ինչպէս կը տեսնէք, աղոց հետ կը խօսի . նա ձեր ամէն հարցմանը պատասխան կու տայ, քանզի Թագաւորին պաշտօնատարներէն է : Անտեսն օտարականը Թագաւորին պաշտօնէին մօտենալով կը հարցունէ անոր թէ կը հաճի՞ արդեօք քանի մը տեղեկութիւն տալ այն գետին վրայով որոյ համար կ’ըսուի թէ քաղաքին մօտ է, և թէ ամէն քաղաքացի պէտք է որ օր մը անկէ անցնելով երթայ Թագաւորին երկիրը որ գետին միւս կողմն է : “Ամենայն յօժարութեամբ,” պատասխանեց պաշտօնեան . “եթէ կը հաճիք ինծի հետ գալ քաղաքէն դուրս

քիչ մը հեռու, գետը ձեզի կը ցուցնեմ :” Օտարականը գնաց Թագաւորին պաշտօնատարին հետ, և գալովն մէջէն անցնելով եկան լայնատարած և խորաջուր գետի մը քով : Օտարականն այն գետը տեսնելով զարհուրեցաւ և ըսաւ Թագաւորին պաշտօնատարին . “Մտո՞յգ է որ այս քաղաքին բնակիչներուն ամէն մէկը պիտի ստիպուի օր մը անցնիլ այս գետէն :” “Այո,” ըսաւ պաշտօնատարը . “Թագաւորին հրամանն այս է :” “Բայց հարկ է որ անոնք ջուրին մէջէն անցնին . քանզի, ինչպէս կը տեսնեմ, գետին հոսանքն այնպէս ուժղին և արագ է որ զանոնք կրնայ առնուլ տանիլ : Ուրիշ ճամբայ մը չկա՞յ անդին անցնելու՝ առանց ջուրին մէջէն երթալու :” “Անտարակոյս կայ,” ըսաւ միւսը . “Թագաւորն արդէն հոգ տարած է չինել տալ հաստատուն կամուրջ մը, յորմէ գետէն անցնող ամէն մարդ կրնայ միւս կողմն երթալ, եթէ կամենայ :” “Կամուրջ մը,” գոչեց օտարականը . “բայց ես այդպիսի բան մը չեմ տեսներ . քաղաքացիներէն մէկն ալ որուն հետ քիչ մը յառաջ կը խօսէի գետին վրայով՝ ամենեւին կամուրջի խօսք չըրաւ . թերևս անոր վրայով տեղեկութիւն չունէր :” “Թերևս,” կրկնեց պաշտօնատարը . “բայց, ինչպէս ըսի, գետին

վրայէն անցնելու համար կայ կամուրջ մը ,
 զոր թագաւորին որդին չինած է , և ամէն
 մարդու հրաւէր կ'ընէ անկէ անցնելու : Ստոյգ
 է որ քաղաքացիներէն շատերն զբաղեալ ըլ-
 լալով իրենց առեւտրովը և ուրիշ հոգերով,
 գիտնալով ևս թէ իրենց կանչուելու ժամա-
 նակն անորոշ է , կամուրջին նկատմամբ խնդիր
 կամ հարցութիւն չեն ըներ , և եթէ երբէք
 անոր վրայով բան մը լսեն , շուտով կը
 մոռնան : Արդարեւ կամուրջը քիչ մը հեռու
 է , և բաւական աշխատութիւն պէտք է զայն
 գտնելու . բայց այն է մի միայն ապահով ճամ-
 բան գետին միւս կողմն անցնելու : Շատ , շատ
 մարդիկ չեն հաւատար ասոր . կը կարծեն
 թէ կարող են անցնիլ գետին մէջէն քայելով
 կամ լողալով . այս պատճառաւ , երբ կը կան-
 չուին թագաւորին եղած տեղը երթալու հա-
 մար , կը ստիպուին այս վերջին ճամբան բըռ-
 նել , այսինքն՝ հետի կամ լողալով անցնիլ :
 Այս տեսակ մարդիկ անտեղեակ են կամուրջին .
 և եթէ իրենց կանչուած ատենը կամուրջը
 գտնել կամենան , անօգուտ է , քանզի անցած
 է ժամանակը . ուստի կամայ ահամայ կը նետ-
 ուին այն խոր և սրընթաց ջուրց մէջ , և հոսան-
 քին բռնութենէն մղուեալ՝ հարկաւ կը տար-
 ուին : Այս կողմը մնացողներն անգէտ ըլլալով


գետին մէջէն անցնողներուն պատահած ար-
 կածից՝ իրենք ալ նոյն բանը կ'ընեն , երբ
 անցնելու կարգն իրենց կու գայ : Այսպէս կը
 կորսուին իրարու ետեւէ՝ առանց տեսնելու
 երբէք թագաւորին երեսը և անոր գեղեցիկ
 և փառաւոր արքունիքը :


“Շատ ցաւալի է ասիկա ,” ըսաւ օտարա-
 կանը : “Այո ,” պատասխանեց թագաւորին
 պաշտօնատարը . “արդարեւ ցաւալի է , մա-
 նաւանդ եթէ խորհինք թէ ի՞նչ մեծ ծա-
 խիւք շինուեցաւ կամուրջը , և թէ քանի քա-
 նի անգամ թագաւորը կը զրկէ իւր ծառա-
 ները քաղաքին բնակիչներուն լուր տալու կա-
 մուրջին վրայով , զգուշացնելու և խրատելու
 զանոնք որ ամէն մարդ փութով սորվի կա-
 մուրջին տեղն ու ճամբան , այնպէս որ եթէ
 յանկարծ կամ գիշերուան մէջ իսկ կանչուի ,
 կարող ըլլայ գտնել զայն , և ապահով անց-
 նի գետին միւս կողմը :

Նա մանաւանդ թագաւորը գիրք մ'ալ
 հրատարակել տուած է , յորում լիովին
 տեղեկութիւն կը տրուի կամուրջին վրայով ,
 և թէ ինչպէս կը գտնուի անիկա : Այս գիրքը
 քաղաքին գրատուններուն մէջ կը վաճառուի ,
 բայց ցաւով կ'ըսեմ թէ շատերն անփոյթ են
 անկէ օրինակ մը գնելու , կամ , եթէ ունին ,

կարդալու ուշադրութեամբ:” “Քաղաքացւոց այս անհոգութեանը և ապերախտութեանը համար թագաւորն ինչպէս չի բարկանար,” ըսաւ օտարականը: “Թագաւորը շատ վշտացած է. կը ցաւի նաև այս ժողովուրդին վրայ,” պատասխանեց պաշտօնատարը, “քանզի կը սիրէ իւր բոլոր հպատակները, և կը փափաքի որ անոնք անվտանգ հասնին իւր արքայութեան մէջ անոնց համար պատրաստած շքեղ բնակարանները: Այս պատճառաւ անոնց միշտ պատգամաւորներ կը ղրկէ, որոնք կը խօսին ժողովրդեան կամուրջին վրայով, և կը յորդորեն զանոնք անոր օգուտը վայելելու:”

Եթէ մէկը հարցունէ թէ ո՛ւր է այդ քաղաքը, և որո՞նք են անոր անհոգ բնակիչները, կը պատասխանենք թէ այդ հարցունողին բուն իւր բնակած քաղաքն է այն, և հաւանականաբար ինքն ալ այն անհոգ և ապերախտ բնակչաց մին է:





2013

